ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման (Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոց) և ջեռուցման հետ կապված (Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.09.2023թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/58 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-23/58 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ	nverarpine7@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	45964000	35647100	42776520
2	48205350	-	-

5. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.2 «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ծավալաթերթ-նախահաշվի 9-րդ բաժնի կշիռը պակաս է հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և 67-րդ կետերը՝ կասեցնել գնահատման գործընթացը և.

6.1.1 առաջարկել **«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները,

6.1.2 դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մասնակցի կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը ստուգելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց **և** ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը ստանալուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 06.09.2023թ. ժամը 15:00-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկության ստուգման արդյունքների մասին.

7.1 **«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 ՀՀ ֆինանսների նախարարության 05.09.2023թ թիվ 12/12-2/17575-2023 գրությամբ հաստատվել է **«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատման արդյունքների մասին.

9.1 Հրապարակել 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով,

- ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/